

ՄԻԵՏՄԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 21 ԱՊՐԻԼ, 1929

ԹԻԻ 8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐԾՆՔԻՆ ՀԻՄՐ

Կրօնք եւ Մարդկային Փորձառութիւն

7

1. Աւելի յառաջանալէ առաջ լաւ է սահմանել պրպտումի առարկան: Մենք չենք փնտռեր կրօնքի հասկար հիմ մը, այլ կրօնքին հիմը: Առաջինը տեսական է, իսկ երկրորդը գործնական, այս երկուքին միջեւ մեծ տարբերութիւն մը կայ: Եթէ անձ մը կ'զգայ թէ անգոհացուցիչ են կրօնքին ներկայ հիմերը, ինչպէս որ ինք գտնոք կը ճանչնայ, եւ հետեւաբար ինք աւելի լաւ հիմ մը կը փնտռէ, այս կը նշանակէ թէ ան կ'աշխատի կրօնքի հասկար հիմ մը գտնել: Այսպիսի հիմ մը լսելով կը հասկնայ իրողութիւն մը, արամարանութիւն մը կամ փրկիստփայութիւն մը գործնական կը կրօնական մտածումին համար իբր հիմ ընդունի: Յայտնի է անմիջապէս թէ գաղափարներով կ'զբաղի ան: Իր միտքը հանգիստ չէ: Իմացական գոհացում կուզէ ան: Բայց այս գաղափարները բան մըն են եւ կրօնքը ինքը ուրիշ բան մը: Կրօնքի փրկիստփայութեան մը համար հիմ մը չէ գործնական կը կարօտի գտնել, այլ իրական եւ գործօն հիմ մը որ կրօնքը

մարդկային իրողութիւն կ'ընէ:

2. «Կրօնք» բառը ճիշդ առում մը չունի: Ամէն մարդ ընդհանուր գաղափար մը ունի անոր իմաստին մասին, բայց անոր մէկ ճիշդ սահմանը տալու մէջ իրարմէ կը տարբերին: Ահա այս պատճառաւ այս բառը զանց կ'առնուի գիտական խորհրդակցութեան մէջ: Այսու հանգերձ «Կրօնք» բառը նշանակութեան բոլորովին չուրկ պիտի ըլլար, եթէ զայն առանց մարդերու աշխարհի մը համար գործածել երեւակայէ ինք: Եւ եթէ այս այսպէս է, կրօնքին հիմը, ինչ որ ալ է ան, մարդուն մասնայատուկ բան մը պէտք է ըլլայ: Քիչ մը աւելի յառաջ երթալով կրնանք վստահ կերպով ըսել թէ կրօնքին հիմը մարդուն մասնաւոր ներքին ընթացիկ մէջ պէտք է գտնուի, քանզի մարդուն գինքը բնորոշող յատկութիւնը իր ոչ-ֆրիզիքական կեանքին եւ կարողութիւններուն մէջ կը գտնուի:

3. Մեր պրպտումը հիմա շօշափելի եղաւ եւ այս մեծ շահ մըն է: Ներքին կեանքի եւ անոր արտայայտութեան մէկ ձեւը կայ. որուն «կրօնական» անունը կուտանք: Մեր գիտցած եւ ճանչցած մէկ տեսակն է ան: Ան՝ կրօնքի մասին ուսումնասիրութեան մէջ եղածին պէս չէ, ուր առաջին հարցումը անկասկած

սա պիտի ըլլայ. «Ի՞նչ ըսել կ'ուզէք կրօնք ըսելով»: Կրօնական մարդ մը որոշ իրականութիւն մ'է, եւ մեր հարցումը այս է. ի՞նչ է անոր մէջ եզոյ բանը, որուն շնորհիւ ան կրօնական մարդ մըն է:

4. Կրօնական մարդու մէջ հիմնական բանը մտաւորական չէ, այսինքն իր ծանօթութիւնը կամ մտաւորական պաշարին չափը չէ: Տղէտ միեւնոյն ատեն կրօնական կեանքի տէր մարդիկ կան, ուսեալ միեւնոյն ատեն կրօնական կեանքի տէր մարդիկ կան: Այսու հանգերձ իւրաքանչիւրին համար ալ մտածելը անհրաժեշտ ծառայութիւն մ'ունի: Բանդի ամէն մէկը իր առջեւ ունի բարձրագոյն, բարի, վերջնական ճշմարտութիւն մը զոր իր միտքը իբր իր լաւագոյնը սահմանած է:

5. Այս վերջնական բարձրագոյն ճշմարտութեան համար ձգտող զործօն ներքին բնութիւնը կը մնայ միայն, երբ մարդ իր սիրտը կը բանայ անոր եւ կը ջանայ զործադրել զայն: Եւ այս ընելով է որ ան ներքին զործունէութիւն կրնայ ցուցնել, որ յատկանիչն է կրօնքի տէր մարդու մը: Կրօնական կեանքի սովորական լիզուն գործածելով՝ ան վստահութիւն եւ հնազանդութիւն կը ցուցնէ Աստուծոյ հանդէպ քանի զԱյն կը ճանչնայ:

6. Այս վերլուծումին շիտակ ըլլալու կամ չըլլալու հարցը կրնայ ունէ կրօնական կեանքի տէր մարդ մը փորձի ենթարկել: Ի՞նչ է քու զիրքդ ճշմարտութեան հանդէպ, Աստուծոյ հանդէպ: Ահա հոս վստահելու եւ հնազանդելու գործնէութեանց մէջ եւ ասոնց համար իր մէջը ընդունակութիւն ունեցող մարդկային բնութեան մէջ կը գտնուի կրօնական կեանքին, այսինքն կրօնքին հիմը:

Ճ. է. ՄԷՐԻԼ

ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔ

«ՈՎ ՀՍՅՐ ՄԵՐ ՈՐ ԵՐԿԻՆՔՆ ԵՍ»

Մեզի շատ հառաքակ զարձած աղօթք մըն է Տէրունական Աղօթքը, շատ կըրկնուելով իւր ազդեցութիւնը կորսնցնելու ենթակայ: Յաճախ անխորհուրդ, մեքենական, անպատկառ կերպով կ'արտասանուի ան: Այսու ամենայնիւ չկայ անկէ բարձր աղօթք մը. չկայ ուրիշ մը՝ անոր պէս ըլլալու հոգեւոր կեանքի անսպառ ազբիւր:

Աղօթք Աստուծոյ կը մատուցուի. մենք «Հայր» կոչականով Աստուծոյ կ'ուղղենք մեր խօսքը: Պէտք է չմոռնալ այս կարեոր կէտը:

Ինչո՞ւ Յիսուս այս Հայր բառը ընտրած է:

Ունէ կրօնքի ազբիւրը՝ իր Սատուծոյ գաղափարն է. բոլոր ուրիշ հաւատալիքներ ու վարդապետութիւններ, բոլոր կրօնական ծէսերն ու արարողութիւնը, բոլոր բարոյական օրէնք եւ կենցաղ՝ այդ կեդրոնական գաղափարէն կը բխին: Կրօնք մը չի կրնար իր ազբիւրէն աւելի բարձր ըլլալ:

Միաստուածութիւնը իբրեւ փիլիսոփայական ըմբռնում՝ անհունապէս բարձր է բոլոր բազմաստուածեան կամ համայնաստուածեան գաղափարներէ: Բայց ցորչափ Աստուածութիւնը իբրեւ տիեզերքէն անջատ եւ հեռու, եւ արտաքինապէս միայն անոր ազդող կ'ենթադրուի, ցուրտ գաղափար մըն է եւ չունի ոյժ՝ հոգեւոր խորունկ կեանք ազդելու: Հին Կտակարանի յայտնութիւնը Աստուծոյ մասին՝ գերազանց էր բոլոր ուրիշ կրօններու եւ փիլիսոփայութեան ըմբռնումներէն. հոն կը գտնենք մեկ Աստուած միայն, հոգեւոր, անտանելի, սուրբ, բայց եւ այնպէս տիեզերքի եւ մարդկութեան հետ կենսականապէս հաղորդակից: Դժբախտաբար Հրէութիւնը մեր Փրկչին զալստեան ժամանակ՝ մե-

ծապէս կորսնցուցած էր այս յայտնութիւնը, և հեռուոր, բռնակալ, ինքնահաճ Աստուած մը կը պաշտէր, որուն սիրտը չի նկատ ջանալ պէտք էր անհամար մեծ ու պղտիկ արարողութիւններով և ծիսակատարութիւններով: Կրօնքը բեռ մը դարձած էր մարդոց և ոչ թէ հոգեւոր կեանք, կայտառ և աճեցուն:

Յիսուս իր կեանքով ու խօսքերով ըրաւ Աստուծոյ մասին կատարեալ յայտնութիւնը: Անիկա Աստուծոյ, տիեզերաց Արարչին, Հայրուքնաւ գաղափարը առաւ և գայն հիմ ու կեդրոն ըրաւ իր բերած նոր հոգեւոր կեանքին:

«Հայր».— Տիեզերաց Արարիչը անձ մըն է, ոչ թէ սկզբունք մը, գաղափար մը, վերակաշու թիւն մը, անանձնաւոր ոյժ մը, կոյր բախտ մը և կամ մանր բան կանխորոշող ճակատագիր մը: Անիկա Հայր մըն է, այսինքն փրկող անձ մը: Աստուած արդար, միանգամայն զթած Հայր մըն է, և ոչ թէ բռնաւոր իշխան մը, անզուխ, անզգայ և անողոք:

Աստուած է բոլոր հայրութեան նախատիպարը. «Ամէն ընտանիք երկնի մէջ և երկրի վրայ Անկէ կ'առնէ իր անունը» (Յփես. Գ. 15): Ամէն ճշմարիտ հայր՝ Հայր-Աստուծոյ անդրադարձումն է միայն: Մարդիկ որչափ Աստուծոյ մօտենան և նմանին՝ այչափ տիպար հայրեր կը դառնան:

Կը հեռու թէ Տիեզերքը, մանաւանդ Մարդկութիւնը, Աստուծոյ ընտանիքն է. իր զաւակներն են անոնք, իր սրտէն բխած: Անոնք իր հոգածութեան առարկայ են, թանկագին են իր աչքին: Իր արարածներն ալ, մանաւանդ բանական արարածները, մարդիկ, պէտք է սրգիական երկխոսութեամբ սիրեն զինքը: Դժբաղդարար ամէն մարդ չի զգար այս ողորմական յարաբերութիւնը, այսինքն՝ Աստուծոյ կախում ունենալու, միանգամայն սիրոյ և համարձակութեան զգացումը: Յիսուս իր երկրաւոր կեանքին մէջ՝ Աստուծոյ հանդէպ որդիական յարաբերութեան կատարեալ մարմնացումն էր, և այս է իր գերազոյն յայտնութիւնը: Յիսուսի պէս զգացողներն են Աստուծոյ փափաքնէն (Յփես. Բ. 19): Բայց Աստուծոյ փափաքն է ամենուն իրեն զալը: Տունը կեցող մի՞թէ որդիով չի պահանջար, այլ կ'ուզէ որ տունէն հեռացած և օտարութեան մէջ թշուառացած անառակ որդին ալ իրեն դառնայ:

Մեր տառապիտակ և յուսախաբ ժողովուրդին մէջ տարածենք այս աւետիսը.— Երկնաւոր Հայր մ'ունինք, որուն սէրը տկար կամ թոյլ չէ, այլ հզօր. պըղատոնական չէ, այլ պորձնական. չէ փոփոխական, այլ հաստատուն, համատարած, անաչառ և սուրբ. որուն ներողամտութիւնը միայն է իր արդարութեան. որ հաւատարիմ է, և ո'չ կըրնայ մոռնալ, ո'չ ալ ուրանալ ինքզինք, իր Հայրութիւնը...:

Մարդկային ցեղի ամէնամեծ կարօտութիւնն է այսօր՝ Աստուծոյ Հայրութեան սկզբունքը ճանչնալը, որմէ բնականաբար կը բխի մարդոց Եղբայրութեան սկզբունքը: «Վասն զի ձեր Հայրը մէկ է, որ երկինքն է: Եւ դուք ամէնդ եղբայր էք» (Մատթ. ԻԳ. 8, 9):

Ե. Ս. ՔԱՍՏՈՒՆԻ

ՅՈՒՈՒԱՄՆԵՐ

ՁՈՅԳ ԶԱՓԱՆԻՇՈՎ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Անհատական կեանքի մէջ մէկ տեսակ և հասարակական կեանքի մէջ տարբեր տեսակ բարոյական սկզբունքի պորձածութիւնը մեծ ու պոյն փորձանքներէն մէկն է, որ սպառնալից հանգամանք մ'առած է այսօր քաղաքակիրթ աշխարհի մէջ: Ձոյգ չափանիշ ունենալ կը նշանակէ հանրային կեանքի մէջ, անհատին կառավարութեան հետ, կամ պետութիւններու իրարու հետ ունեցած յարաբերութիւններուն մէջ հաստատել

ներ կը նկատուին, եւ եթէ երբէք այս արարքները մեղադրողներ գտնուին, վստահ եղէք անոնց 90 առ հարիւրին ազմուկին զրգապատճառը այդ առիթէն իրենց զրկուիլն է, եւ ոչ թէ պանոնք բարոյապէս առարկելի գտնելնին:

Դժբաղդաբար մեր Ազգային կոչուած գործերուն մէջ երբեմն այս մտայնութեան կը հանդիպինք: Ազգին է՛ն յորգելի եւ է՛ն պատուաւոր նկատուած անհատներէն ոմանք երբէք յանցանք չեն նկատիր իրենց յանձնուած գումարներու, կտակներու հաշիւը չտալ եւ անոնցմէ իւզոտ պատառներ ապահովել իրենց համար, եւ թերեւս այսպէս ընելնուն համար կը պարծնան իսկ: Ամէնուն ծանօթ պարագայ մըն է որ զանազան նւապատակներով հանգանաւուած գումարներու մեծ մասը, թերեւս բոլորը կ'իւրացուին այսպիսի պատուաւոր ազգայիններու կողմանէ: Մեզի միայն մասամբ ծանօթ է թէ որչափ շահագործումներ կատարուեցան վերջին տարիներուն մէջ բարեգործական նպատակներով տրուած, զրկուած նպաստներու եւ առարկաներու մատակարարումին մէջ: Այս պարագաները յիշելով նպատակ չունինք պանոնք մեղադրել, ասոր պէտք չկայ: Բայց ինչ որ կ'ուզենք յայտնել այս է, թէ զժբաղդաբար եթէ ոչ բոլոր ժողովուրդը՝ գոնէ անոր կարեւոր մէկ մասը այսպիսի արարքները կամ բնական նկատելով անտարբեր եւ թոյլատու աչքով կը դիտէ զանոնք, եւ կամ ալ պանոնք կը հաստատէ իր մտքին մէջ եւ անոնց կը նախանձի բաղդաւոր գտնուելնուն համար: Ահա այս մտայնութիւնն է որ զէջ է: Պարագան աւելի ամօնալի երեւոյթ մը կ'առնէ երբ այս հոգին կը տեսնուի ազգին առաջնորդող հոգեւոր պաշտօնականներու մէջ: Այս մտայնութիւնը մեր մէջը գտնուածին չափ եւ կամ ատկէ աւելի կը տեսնուի նաեւ այն ժողովուրդներու մէջ՝ որոնց մէջ մենք կ'ապ-

րինք: Պատերազմէն վերջ կարծես այս աւելի ընդհանրացած է աշխարհի վրայ:

Ո՛չ, Յիսուս երկու տեսակ բարոյական կանոն չքարոզեց, — անհատական կեանքի մէջ մէկ տեսակ՝ հանրային կեանքի մէջ ուրիշ տեսակ, անհատի հանդէպ մէկ տեսակ՝ կառավարութեան կամ ազգին հանդէպ ուրիշ տեսակ, իր ազգին հանդէպ մէկ տեսակ՝ ուրիշ ազգերու հանդէպ ուրիշ տեսակ՝ իր կրօնակիցին հանդէպ մէկ տեսակ՝ տարբեր կրօնքէ եղողներուն հանդէպ ուրիշ տեսակ: Յիսուս այս զանազանութեան դէմ բողոքեց իր բոլոր կեանքովը, բոլոր վարդապետութեամբը, բոլոր քարոզութեամբը: Ո՛չ, Աստուած մէկ է եւ Անոր բարոյական կանոնները ամէն տեղ, ամէն ժամանակ, ամէն պարագային նոյնն են: Մարդկային ծանծաղամտութիւնը զայն չի կրնար փոխել: Յիսուս ըսաւ. «Ձեր այոն այո՛, ոչը ո՛չ ըլլայ:» «Թէ Աստուծոյ եւ թէ մամոնայի չէք կրնար ծառայել:» «Վա՛յ ձեզի, ո՛վ կեղծաւորներ:»

Զ. Ա. ՊէճճեԱն

ԱՍՏՈՒՍԾԱՅԻՆ ՆԵՐՇՆՁՈՒՄ

Աստուածային ներշնչում ըսելով ըսել կ'ուզենք թէ Ս. Գիրքը Աստուծոյ ներշնչուած է, որուն մասին Պետրոս առաքեալ այսպէս կ'ըսէ. «Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած խօսեցան:» Բ. Պետ. 1. 21:

Աստուածաբանական տեսակէտէ նայելով այս նիւթը շատ ընդարձակ եւ խոր է: Բայց կը յուսամ թէ այս մասին կարելի է աւելի լոյս տալ մեր անձնական փորձառութենէն եւ այս նիւթին մէջ մասնագէտ աստուածաբաններու խորհրդածութիւններէն քաղուած գործնական ծանօթութիւն տալով: Պէտք է խոստովանիլ թէ ասոնք ուսեալ դասուկարգին համար բուսականչափ որոշ են, բայց ուրիշ դասակարգ մը կրնայ անոնցմէ օգտուիլ:

1. Խնչ պէտք է հասկնալ «Ս. Գիրքը Աստուծոյ ներշնչեալ է» բացատրութեամբ:

Ս. Գիրքը Աստուծոյ ներշնչեալ է:

Արդեօք սխալած կ'ըլլանք երբ ըսենք թէ ըստ Ս. Գիրքը Աստուծոյ ներշնչութեամբ է, թէպէտ ոմանք կ'ըսեն թէ Սուրբ Գիրքը Աստուծոյ ներշնչեալ խօսքերու արձանագրութիւնն է: Երբեք չեմ կարծեր, քանզի այսպէս ըսելով չենք ուզիր ըսել թէ Ս. Գիրքի մէջ գրուած ամէն մէկ ղէպք Աստուծոյ կողմէ վաւերացուած է: Շատ անգամ գծուաւութիւններու կը բաղխինք որոշ կերպով իրարմէ չգանազանելով ներշնչումը եւ յայտնութիւնը: Անգիրներէնի մէջ այս երկուքը յայտնի կերպով զանազանուած են, բայց Թրքիւրէնի մէջ երկուքն ալ նոյն բառով կ'որոշուինք սխալ կերպով: Յայտնութիւն (ռեկոնկլըն) ըսելով կը հասկնանք այն հրամանը, ղէպքը, ծանօթութիւնը եւ զաղտնիքը գործնք Աստուծոյ ուղղակի իր սուրբ մարդերուն յայտնած է, եւ զանոնք վաւերացուցած է: Իսկ ներշնչեալ կէտերն են Աստուծոյ կողմանէ թէ վաւերացուած եւ թէ միայն անոնց արձանագրութիւնը հաստատուած ղէպքերը, խօսքերը կամ գործերը:

Աստուծոյ չհաստատուեց եւ ոչ ալ մենք կը հաստատունք օծի, Ազատի, Եւայի, Փարաւոնի, Յորի բարեկամներուն եւ ուրիշ շատ մը մարդերու խօսքերը եւ գործերը: Բայց անոնց արձանագրութիւնը հաստատուեց որպէս զի յաջորդ սերունդները անոնցմէ զատիք քաղեն: Եթէ յայտնութեան եւ ներշնչութեան մէջ այս զանազանութիւնը ընդունինք գծուաւութիւններու մեծ մասը վերացուած կ'ըլլայ:

2. Աստուծոյ ներշնչութեան նպատակը: Աւելի յառաջ երթալու պէտք չի մնար եթէ Ս. Գիրքը նկատենք իբր սովորական մարդերու կողմանէ գրուած մէկը: Բայց աւելի յառաջ երթալ եւ ու-

սումնասիրել կ'արժէ (եւ թէ ընկելու ալ պատասխանատու ենք) եթէ գայն նկատենք իբր Աստուծոյ կողմանէ հրաշալի կերպով կազմուած Սուրբ Գիրք մը:

Աստուծոյ նպատակը՝ այսպիսի հրաշալիաց հրաշալիքը եղող Գիրք մը դարերու մէջ պատրաստել տալով մեզի տալու մէջ, քիմիադիտութիւն, բնագիտութիւն, աստղագիտութիւն, եւայլն գիտութիւնները սորվեցնել չէ, թէպէտ այս օր է՛ն նշանաւոր գիտնականներն շատերը կ'ըսեն թէ գիտութիւններէն ոչ մէկը տակաւին չէ կրցած հիւքել Ս. Գիրքի ոչ մէկ վարդապետութիւնը եւ ոչ մէկ ղէպքը, նոյն իսկ բնաշրջումի տեսութիւնը տեսութիւնէ մ'անգին անցած չէ: Անոր նպատակն է մարդկութիւնը փրկել եւ իր գտնուած վիճակէն աւելի բարձր մանկարդակի հասցնել կարգ մը պայմաններու տակ փրկանքի մը միջոցաւ: Հետեւաբար շատ մը գծուաւութիւն կէտեր պիտի լուսարանուին եւ Ս. Գիրքը աւելի՛ շիտակ եւ աւելի՛ լաւ հասկցած պիտի ըլլանք, եթէ բարձր նպատակը մեր միտքին մէջ ըլլալով ուսումնասիրենք գայն:

3. Բայց պէտք է առաջին անգամ Ս. Գիրքի մէջ գեղարվեստը ընդունինք եթէ գայն ուսումնասիրելով կ'ուզենք այդ կարեւոր նպատակը հասկնալ: Մենք շատ կը սխալինք եթէ անոր մէջ գրուած հրաշքները չընդունելով զանոնք բնական եւ բանական կերպով մեկնելու աշխատինք. այսպէս ընելով անել ճամբու մը մէջ պիտի գտնուինք, եւ Տէրը չընէ, գայն իբր առասպելներու հաւաքածոյ մը մէկ կողմ պիտի նետենք: Անդին բան չի մնար եթէ Ծննդոցէն մենչեւ Նոր Կրտակարանի վերջը յիշուած հրաշքները իրենց եղած վիճակով չընդունուին: Եթէ տիեզերքի, բոյսերու, կենդանիներու եւ մարդու, 2000 միլիոն աստղերու եւ անթիւ արեւներու, երկնային գրութիւններու ստեղծումը, անոնց կանոնաւոր շրջանները, ձգողական ոյժը եւ նը-

ման բաները պատահական չեն այլ հըրաշքներ, ինչո՞ւ դժուար ըլլայ ընդունիլ Յիսուսի կոյսէն ծնանիլը և մարդանալը, Անոր քաւչական մահը մարդկային մեղքի համար, անոր յարութիւնը և մարմինով յարութիւնը, Հօրը քով մեզի համար բարեխօսութիւնը, Անոր երկրորդ գալուստը մարմինով, արդեօք ասոնք յիշուած հրաշքներէն աւելի՞ մեծ են: Մեր ամենամեծ յանցանքն է անսահման իմաստութեան և զօրութեան տէր Աստուածը և Անոր զորքերը քննել և դատել մեր սահմանափակ միտքովը: Աստուծոյ ընելիքին և չընելիքին և կամ ընելու կարողութեան մասին վճիռ տալ մեր տգիտութիւնը կը յուշէ: Անոր մասին մեր գիտցածը չգիտցածներուն թերեւս մէկ միլիոններուդ իսկ չէ:

4. Ս. Գրքի Աստուծոյ ներշնչեալ ըլլալուն մասին յառաջ եկած կանխաւորում և դժուարութիւններու մեծ մասը կը ծագի անոր շիտակ չմեկնուելէն: Ընդհանրապէս հասկցուած է՝ թէ կարգ մը աւարկութիւններ զայն կատարեալ չուսումնասիրելէ յառաջ կուզան. յաճախ ասանուած է որ ընդդիմախօսները զայն լաւ կերպով չկարդացողներու մէջ կը գտնուին: Անգամ մը փաստաբան մը կը յայտնէ թէ Ս. Գրքին շատ մը գէպքերուն չի հաւատար: Եւ երբ կը պահանջուի որ անոնցմէ մէկը յիշէ սապէս կըսէ. «Ինչպէ՞ս կըլլայ որ Նոյի տապաւնը, որ 300 կանգուն երկայն, 50 կանգուն լայն 30 կանգուն բարձր է, կարելի կըլլայ երկու կողերով քաշուող կառքով մը տանիլ»: Անգլիերէնի մէջ թէ Նոյի նաւը և թէ ուխտի սնտուկը՝ Արկ (ARK) կը կոչուի, (ինչպէս որ Հայերէնի մէջ տապան կը կոչուի): Ըսել չենք ուզիր թէ բոլոր աւարկութիւնները այսպէս անտրամաբան են. բայց ըսել կ'ուզենք որ եթէ Ս. Գրքը յարգանքով, խոնարհութեամբ, անկեղծ աղօթքով ուսումնասիրուի իր ամբողջութեամբը, և

եթէ ինքզինքնիս անկողնակալ կերպով Ս. Հոգիին առաջնորդութեան յանձնենք շատ մը դժուար երևցող խնդիրները իրենք իրենցմէ կը լուծուին: Այս առթիւ ընթերցողներուն կարգաւ կը յանձնարարեմ «Difficulties in the Bible» և «Practical and perplexing Questions answered» անուն գիրքերը*, գրուած հանրաժանօթ աւետարանիչ և մեծ ուսուցիչ Տր. Թօրիի կողմանէ, որ իր հագուազիւս տրամաբանող միտքովը, խոր հոգեոր կեանքովը, հիանալի անձնաւորութեամբը, քարոզութեամբը և զրուութիւններովը տաօը հաղարաւոր, թերեւ հարկւր հազարաւոր մարդերը փրկութեան և Փրկչին առաջնորդած է: Երբեմն ալ իբր փաստ կը յիշուի թէ, Ս. Գրքի կարգ մը կտորները իբր «Բանաստեղծութիւն, գրուած և կամ անոնց մէջ «Բանաստեղծական բառեր» գործածուած են, թէ այս պատճառաւ իբր Աստուծոյ ներշնչեալ գիրք մը անոր հեղինակութիւնը կը պակսեցնէ: Ի՞նչ զարմանալի աւարկութիւն! Ինչո՞ւ գրող մը յարզի կը նկատուի երբ ան արձակ գրէ, բայց յարզի չսեպուի երբ ան ոտանաւոր գրէ: Աստուածային ներշնչումի մէջ ալ զանազանութիւնը աւելի հաճելի չէ՞:

Ս. ՄԵԼՔՈՆԵԱՆ

(Շարունակելի)

ՊԱՍԼՊԷՔԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Ս. Գրոց երկիրներու և Դպրոցներու Միութեան առաջին համաժողովին մէջ մեծ ուրախութիւն պատճառեց Հայց. Առաք. Եկեղեցւոյ երկու բարձրաստիճան կրօնականներու, Դեր. Բարկէն Եպս. Կիւլէսէրեանի և Տ. Արտ. Վրդ. Սիւրմէեանի, ներկայութիւնը: Ապրիլ 9 ի իրիկուան հաւաքոյթին մէջ Միու-

*Գիրքերու հասցէն է The Bible Institute Colportage Association, 828 La Salle Ave., Chicago, Ill.

թեան քարտուղարը ներկայացնելով նոր հրերերը հրաւիրեց զանոնք խօսելու: Պր. Լեոն Զենեան անդիւրեքնի թարգմանեց անոնց խօսքերը, որոնց մէկ կարճ ամփոփումն է հետեւեալը:

Գեր. Բաբկէն սրբազան շնորհաւորելէ վերջ այս համաժողովը և զայն կազմակերպողները ըսաւ. «Հայերը Արեւելքի մէջ Աւետարանը լաւ պահող ազգ մը եղած են: Ամերիկա գոյութիւն ունենալէ դարեր առաջ Հայաստանի հողը քրիստոնեայ մարտիրոսներու արիւնովը ոռոգուած է: Շատ հաճելի է հոս լսել Աւետարանի ձայնը: Մաղթանքս այս է որ Աւետարանի խօսքը տարածուի, քանզի աստուածաբանութիւնը մեզ կը զատէ իրարմէ բայց Աւետարանը կը միացնէ: Կը մաղթեմ որ Աւետարանը օրով ըլլայ այս հաւաքոյթին մէջ»:

Ապա Արտաւազդ Վրդ. գրութիւն մը կարդաց որուն մէջ հետեւեալ էր. ք խորհրդածութիւնները յայտնեց:

1. «Վերջերս Ամերիկայի մէջ շատ կրկնուեցաւ հանրային կրթութեան մասին: Ամերիկացւոյ ունեցած հաւատքը: Հայ Ազգը դարեր առաջ այս խորհրդէ իր եկեղեցիներուն քովը հաստատելով զպրատունը: Դարերէ ի վեր Հայ Եկեղեցիին կոչնակը և հայ դպրոցին զանգակը միասին հնչած են ներդաշնակօրէն:

2. Այսօր մեծ թիւով ազանաւոր օտար բանասէրներ կ'ուսումնասիրեն Հայ անցեալը: Եթէ Հայը իր անցեալ քաղաքակրթութեամբ ճանչուեցաւ օտարներէ, այդ եղաւ շնորհիւ իր անկախ եւ ինքնուրոյն եկեղեցիին որ՝ միակ հաւատարիմ պահպանը եղաւ ցիւղին բոլոր սրբութիւններուն, բոլոր աւանդութիւններուն, իր բովանդակ գրականութեան, իր ինքնայատուկ զեղարուեստին ու ճարտարապետութեան: Այն օտարները որ լաւագոյնս ճանչցան Հայց. եկեղեցին, փափաքը ունեցան օգնել ա-

նոր: Բիլիֆը խղճմտանքը դարձաւ Ամերիկեան լուրջ ազգին, որ օգնեց մեզի գիտակցօրէն, և ոչ թէ միայն իբր եղբայրական պարզ պարտականութիւն մը:

3. Թէպէտ առանձնաշնորհեալ մի քանի դիւանագէտներ արդար չգտնուեցան Հայ եկեղեցւոյ ենթարկուած վիճակին, վանքերու, եկեղեցիներու, և դպրոցներու քանդումին հանգէպ, բայց միւս կողմէ չենք դադրիր երբէք հաւատալէ որ բազմաթիւ անկեղծ բարեկամներ, մանաւանդ Ամերիկայի մէջ, կը փափաքին անեղծ և անվթար պահել Հայց. եկեղեցին:

Ինծի համար ամենամեծ երջանկութիւնը պիտի ըլլար միշտ ա'ւ աւելի շատ տեսնել այսպիսի թանկագին համակիրներու թիւը: Պատալէքի այս հաւաքումին կը բերեմ իմ և իմ ժողովրդեան ըս անկեղծ և համակիր ողջոյնները, և կը հաւատամ որ հոս Աւետարանի անունով ներկայ եղող բոլոր եղբայրներն ու քոյրերը միևնոյն ոգին կը տածեն Հայց. եկեղեցիին հանգէպ:» Տ. ձ. Խ.

ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՅԺ

Մարդկային մարմինը ապրող մեքենայ մը և քրմիական աշխատանոց մ'է: Այս կենդանի մեքենան իր մէջ ունի անթիւ գործարաններ և ոյժեր իր և իր ցեղին գոյութիւնը պահելու համար: Այս մեքենան, որ կենդանական աշխարհին բարձրագոյն աստիճանին վրայ կը գտնուի, է'ն բարդ և խորհրդաւոր մէկ արտադրութիւնն է արեգեքի: Գիտուններ իրենց հնարած մեքենաներուն միջոցաւ իրենք զիրենք ուսումնասիրութեան առարկայ ըրած են եւ տակաւին կ'ընեն, և թէպէտ շատ մը ճամարտութիւններ և կանոններ գտած են, բայց տակաւին այս ապրող մեքենային շատ պզտիկ մէկ մասը կրցած են հասկնալ:

Այս յօդուածով նպատակ չունինք

վերջերս մարդկային մարմնի մասին գտնուած ճշմարտութիւնները զրել, և ոչ ալ անոր մէջ գտնուող գործարաններու կազմութեան և գործունէութեան մասին խօսել, այլ մեր նպատակն է կարճ և պարզ կերպով ծանօթացնել թէ ի՞նչպէս այս կենդանի մեքենան ինքզինքը կը պաշտպանէ, կը դարձանէ և իր նեղ պարագաներուն համար ոյժ կ'ամբարէ:

Մարդկային մարմնի մէջ շատ մը կենսական գործարաններ կան, չոր օրինակ. — ջրային դրութիւն, մարսողական, շնչառական, ծննդական, արեան շրջանի, և անպէտ նիւթերու արտաքսման գործարաններ: Այս կեանքի կեդրոններուն վրայ կատարուած ներքին կամարատքին, մասնակի կամ ընդհանուր յարձակումները շատ սաստիկ են: Մարդկային մարմինը է՛ն սաստիկ կուռի դաշտ մըն է որ մահու և կեանքի պայքարը կը մղուի: Շինիչ և քանդիչ ոյժերու ռազմավայրը մարդկային այս կենդանի մեքենան է: Ուրիշ և ոչ մէկ ապրող գոյութիւն չ'ենթարկուիր այն յարձակումին և հիւանդութեան որոնց կ'ենթարկուին մարդերը: Մինչ շինիչ ոյժերը կը գործեն պարզէն դէպ ի բարդը և կատարեալը, քանդիչ ոյժերը միւս կողմէն կ'աշխատին այս բարդ մեքենան աւելու և հոգի վերածելու: Բայց Աստուած մարդկային մարմինը օժտած է անմահ և անթիւ պաշտպանողական ոյժերով՝ այս յարձակումներուն դէմ զբռնելու համար:

Այս պաշտպանողական ոյժերը յիշելէ առաջ սա կէտը պէտք է պարզ կերպով յայտնել, թէ մեր մարմնին մէջ գտնուող գործարանները ունին իրենց առօրեայ անհրաժեշտ պաշտօնները և ասոնց համար պէտք եղած ոյժը, անոնք միշտ չարժուի մէջ են և քիչ կամ շատ կը գործեն: Մեր մարմնին մէջ պահուած պահեստի ոյժերը զորոնք պիտի յիշենք, մեր առօրեայ ոյժերը չեն: Ինչպէս որ

յարձակումները տեսակ տեսակ են, պաշտպանող բուժող ոյժերն ալ նոյնպէս այլապէս են: Կրնայ պատահիլ որ այս կեանքի մէջ մարմինը ամենէն աւելի ասոնցմէ մէկուն կամ մի քանիներուն ենթարկուի և երկար ատեն տարբեր տեսակ յարձակումներու չ'ենթարկուի: Իսկ այս կենդանի մեքենան պարագային և պէտքին համեմատ իր պաշտպանողական ոյժերը կ'աւելցնէ կամ կը պակսեցնէ: Արդի բժշկութիւնը կ'աշխատի որ մարմինը նուազագոյն չափով այս յարձակումներուն ենթակայ ըլլայ: Վերջին կէս դարու միջոցին բժշկութիւնը իր ռազմագրութիւնը այս կէտին դարձուցած է, ասոր մէջ յառաջդիմական մեծ քայլեր առած և մեծ գիւտերով մարդկութեան ծառայած է: Տակաւին մեր մէջ շատեր կը գտնուին, որոնք կը խորհին թէ ինչ որ ալ ըլլայ կրնան յարձակումներուն դիմադրել և անոնց յաղթել, եթէ մարմինը զօրաւոր ըլլայ և պաշտպանողական ոյժերը լաւ ըլլան: Այս սխալ է: Իբրեւ օրինակ կրնանք յիշել գերմանական պարտութիւնը: Գերմանները պատերազմի համար մեծ պատրաստութիւններ կատարեցին, իրենց ոյժին վրայ այնչափ գիտակից և վստահ էին որ հըպարտացան և պատերազմը արգիլելու միջոցներուն մասին չխորհեցան, ասոր արդիւնքը ըլլալով պարտուեցան: Մեր մարմինը որչափ ալ առողջ և դիմադրողական ոյժերով օժտուած ըլլայ, պէտք է զգուշանանք հիւանդութիւններու մեղի փոխանցումէն:

Այս ապրող մեքենային ինքնապաշտպանութեան և ինքնաբուժումի համար ունեցած ոյժերէն մի քանիները յիշենք:

1. Մարդկային մարմնի մէջ գտնուող կենսական գործարաններէն մէկը կամ անոր մէկ մասը եթէ հիւանդանայ անոր ընկերը կամ միւս մասը անոր օգնութեան կը հասնի. զօր օր. երիկամունքին կէսը, լեարդին երեքչորրորդը, թո-

քին կէսը եթէ վերաւորուն և գործելէ զաղբին անոնց միւս կէսը կամ մնացած մասը պէտք եղած պաշտօնը կը կատարեն, և բոլոր բնօր կը կրեն մինչեւ որ հիւանդացած մասը առողջանայ և ևրբեմն ալ մինչեւ վերջ: Այս կը նշանակէ որ իւրաքանչիւր գործարան իր առօրեայ պարտականութենէն աւելին ընելու ոյժը ունի:

2. Որոշ ժամանակներու համար մեծնալու կարողութիւն կը գտնուի մի անբնական գործարաններուն մէջ. բացառութիւն կը կազմէ միայն ուղեղը: Զոր օր. սրտին գոնակները կիրպով մը կը փնտռուին, սրտին միւս մասերը անոնց պակասը լրացնելու համար ծաւալով կը մեծնան: Ահա այս լրացուցիչ ոյժի միջոցաւ է որ շատ մը մարդիկ, որոնց սրտերուն գոնակները փնտռուած են, երկար ատեն կ'ապրին երջանկութեամբ: Բայց այսպիսիները պէտք է զգուշանան իրենց սրտերը աւելի բնականօրէն ծանր ֆիզիքական աշխատանքով և կամ սաստիկ տենդով. քանզի ամէն ոյժ իր սահմանը ունի:

3. Այս գործարանները իրենց մէջ և մարմնին զանազան մասերուն մէջ պահեստի ոյժեր կ'ամբարկեն նեղ պարագաներուն համար: Զոր օր. շաքարը, որ այս ապրող մեքենայի մէջ ամուրի պաշտօնը կը վարէ, արիւնի մէջ միշտ պէտք է մէկ առ հազար համեմատութեամբ գտնուի: Կիրպով մը այս համեմատութիւնը եթէ փոխուի, այսինքն շաքարը աւելնայ կամ պակսի, գործարանները կ'սկսին անհանգիստ ըլլալ: Մինչդեռ մարդերը ամէն օր պէտք եղածէն կամ աւելի կամ պակաս շաքար կ'ուտեն: Երբ շատ շաքար պարունակող սնունդ ստանանք լիարդը պէտք եղած չափով միայն շաքար կը զրկէ արիւնի և աւելորդ մասը իր մէջ կ'ամբարէ, և երբ պէտք եղած քանակով շաքար չենք ստանար լիարդը իր ամբարէն պէտք եղած չափով կը մա-

տակարարէ: Լիարդը միշտ մէկ քիւշ շաքար կը պահէ իր մէջ:

(ՏՕՔԹ.) Ֆ. ՅՈՒՆԱՆԵԱՆ
(Շարունակելի)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԷՔԻԶ-ՕԼՈՒԳ ԵՒ ՔԷՕՐՔԻԻՆԷԻ ՄԷՋ

Ճէպէլ Ագրայի փէշերուն վրայ հաստատուած հայ գիւղախումբին մասը կը կազմեն Էքիզ-Օլուգ և Քէօրքիւնէ գիւղերը, որոնք Քէսապէն 20—30 վայրկեան և իրարմէ 15—20 վայրկեան հեռու կը գտնուին:

Այս գիւղերուն մէջ աւետարանական շարժումը մօտաւորապէս առկէ 70 տարիներ առաջ սկսած է: Երկար տառնուած մը համար անոնք Քեսապի Եկեղեցւոյն մէջ մասը կազմած, բայց 35 տարի առաջ երկու գիւղերու աւետարանական համայնքները միանալով զատ եկեղեցի մը կազմած են:

Աւետարանական շարժումին յարողները մեծ հաւածանքի ենթարկուած են իրենց ազգականներուն կողմանէ: Աւետարանականները իրենց զրացիներէն յոյս անուշով յորջորջուած են, բայց անոնք քրիստոնէական նկարագրին բարձր մակարդակին վրայ հաստատ մնացել են իրենց կեանքերուն մէջ համբերութիւն, քաղցրարարողութիւն, աւետարանչութեան և Աստուածաշունչի հանդէպ ջիւմուռանդ հոգի, Կիրակի օրուան յարգանք ցուցնելով:

Պաշտօնական եկեղեցի և զպրոց ունենալէ առաջ Վեր. Ստեփան Մահչիկեան Քէսապէն գալով Աստուծոյ խօսքը կը քարոզէր տուններու մէջ կամ ծառերու տակ: Էքիզ-Օլուգի Աշըգեան Մուսա էմին ալ գիւղերը շրջելով իր զիտցածը կը քարոզէր: Աստուծոյ խօսքին ծարաւ այս գիւղացիներն ալ Քէսապի մէջ եղածին պէս, հակառակ ստատիկ հալածանքի և դժուարութեանց յաճախ ցերեկ և գիշեր կը հաւաքուէին և զիրար

կը քաջալերէին Աստուծոյ խօսքով:

Կը յիշուի թէ՛ կիրականօրեայ ժողովներէն մէկուն մէջ ծառէն ինկած թուփ մը ուտելու համար ձաւող եղբայր մը խօսիւ յանդիմանուած է սուրբ օրը չյարգած ըլլալուն համար: Ծառեր Կիրակի օրերուն իրենց շերամներուն թութի տերն չէին տար: Ահա այսպէս այս պարզ շինականները չէին զարգրեր Կիրակի յարգելէ և զիրենք հաւածողներուն համար ազօթելէ:

Քարոզիչ և հովիւներու ցանկը.—

Առաջին քարոզիչը եղած է Պր. Համբարձում Էջմածեան, որուն յաջորդած են հետեւեալ հոգեւոր գործիչները.— Պր. Յովհաննէս Քէշիշեան, Վեր. Գեորգ Գասարճեան, Պատ. Սահիման Յովհաննէսեան, Վեր. Ս. մահչիկեան, Վեր. Յովհ. Էսքիճեան, Պատ. Բզկեան, Վեր. Ե. Կէօքիէօղեան (այն ատեն քարոզիչ), Պր. Յովսէփ Թաշճեան, Վեր. Ա. Կ. պէրպէրեան. ընդամէնը 10 գործիչ:

Այս գործիչներէն ոմանց գործերը հրդեհի և այլն պատահարներու միջոցաւ փաստուած չըլլալուն համար անոնց յիշատակները մինչև հիմա կենդանի կը մնան: Զոր օր. Քէօքիւնէի եկեղեցական շէնքը, որ 1898ին շինուած է, Պէհէնիցի Մարիամ վարժուհի Առաքելեանի ջանքերուն արդիւնքն է: Բռնակալ կառավարութեան արգելքին հակառակ ժողովուրդը Մարիամ վարժուհիէն քաջալերուած, առանց արտաքին ունեւորութեան կիները և էրիկ մարդերը զիշեր ցերեկ աշխատելով գեղեցիկ եկեղեցական շէնքի մը տէր եղած են:

Քէօքիւնէի երիցատունը Վեր. Գեորգ Գասարճեանի ջանքերուն շնորհիւ շինուած է:

Վեր. Յովհ. Էսքիճեան Էքիւ-Օլուզի մէջ ձեռնարկած էր Էմմանուէլ եկեղեցւոյ շինութեան, բայց առանց զայն աւարտելու բաժնուած էր այս աշխարհէն:

Այս զիւղերուն մէջ կրթութեան կա-

րեւոր տեղ մը տրուած էր: Ակիւզները Զապաճըզ գիւղէն Յովսէփ Էմմի Թրթըրեան և Քէօքիւնէէն Յովսէփ Էմմի Արէլեան ծառերուն տակ պղտիկները հաւաքած և իրենց զիտցածը անոնց սորվեցնելու աշխատած են: Առնց առաջին վարժուհին եղած է Օր. Մարիամ Առաքելեան որուն յաջորդներն եղած են Օր. Եսթեր Սէքլէմեան, Օր. Աննա Քէլեան Պր. Տիգրան Անդրէասեան (հիմա Քէսապի հովիւ), Պր. Սարգիս Պալապանեան, Օր. Գարուն Աբէլեան, Օր. Պէրսիտաբէլեան, Օր. Իսկուհի Ղազարեան, Օր. Խաթուն Զրիշկիրեան, Օր. Աննա Սողոմէնեան և Օր. Նունիա Զէրչեան:

Տարագրութենէ վերադարձող զիւղացիները թէպէտ սկսան իրենց քանդուած բոյները վերաշինել, բայց տակաւին չեն կրցած Մեծ Պատերազմին պատճառած նիւթակտն և բայոյական փնտսները դարմանել և բնականոն պայմանները վերաբեղծել:

Այս շրջանին մէջ գտնուող Աւետ. և կեղեցիկները իրենց ոյժովը, ջանքովը, և հաւատքովը թէպէտ չեն կրնար ուրիշներուն լոյս մ'ըլլալ, բայց անոնք տակաւին ունին շատ կարեւոր գործեր:

Ներկայիս Էքիւ-Օլուզ և Քէօքիւնէի և անոնց մօտ եղող Զապաճըզ, Զինարճըզ, և Պաղճաղզ գիւղերուն մէջ 335 աւետարանական հայեր կան: Իւրաքանչիւր գիւղ ունի իր զպրօքը, ազօթավայրը և երիցատունը, և սկիզբէն ի վեր ամբողջը միասին մէկ քարոզիչով և մէկ ուսուցիչով կառավարուած են, թէպէտ այս կարգադրութիւնը երբեմն զժուարութիւններու պատճառ եղած է:

Հալէպի Շրջանին Գործադիր ժողովը ասկէ երեք տարի առաջ այս զիւղերու մէջ գործելու կը հրաւիրէ Պատ. Ա. Կ. Պէրպէրեանը որ նոյն տարին Աթլնքի Աստուածարանական ճեմարանէն ուսումնաւարտ եղած էր: Պատ. Ա. Պէրպէրեան երկու տարի Էքիւ-Օլուզ և



ՎԵՐ. Ա. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Քէօրքիւնէ միացեալ եկեղեցիին մէջ զործելէ վերջ հերոս Հոկ. 28ին Քէօրքիւնէ, Չագալճըզ և Չինարճըզ գիւղերուն համար հովիւ կը ձեռնադրուի, այդ գիւղերու աւետարականներուն փափաքին համաձայն:

Ներկայիս Էքիզ-Օլուզի մէջ կը գործէ Պատ. Յ. Կիւրլէքեան, որ կը վարէ թէ՛ դպրոցը (25—27 աշակերտներով) և թէ՛ կրօնական պաշտօն կը կատարէ:

Քէօրքիւնէի դպրոցին մէջ, 45 աշակերտներով, կը պաշտօնավարէ Օր. Լուսիա Շատիրեւեան, որ հերոս աշնան Պէյրութէն հրաւիրուած էր: Քէօրքիւնէցիք գիւղին եզերքը գեղեցիկ գետին մը գնեցին, հոն դպրոց մը շինելու համար, որուն կը յուսան մօտերս ձեռնարկել:

Քէսապի և իր չըջակայքին մէջ աւետարանական գործը իր երեւցածէն շատ աւելի մեծ և դժուար է, հետեւաբար ան կը պահանջէ աւելի հաւառօք, ջանք և օգնութիւն: Հոգեւոր գործը հոս պէտք է շատ աւելի զօրանայ և յատաջանայ և

ժողովուրդը զարգանայ: Այս փոքր եկեղեցիները Քրիստոսը և Անոր գործը սիրողներուն աղօթքին և օգնութեան կը կարօտին:

Քեօրքիւնէ

Ա. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԿԵՆՍԱԿՐԱԿԱՆ. — ՎԵՐ. Ա. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ծնած է 1885ին, Սեբաստիոյ Կէմէրէք գիւղին մէջ, Հայ Առաք. ծնողքէ: Մինչև 12 տարեկան եղած ատենը իր երեց եղբոր հետ կը յաճախէ Բող. Դպրոցը: 1899-1905 ուսանող Անաթօլիա Գոլէճին մէջ, ապա մինչև 1909 ուսուցից քարոզիչ Մէնթէշէ, Շէհր գըլլա և Ագսէրայ: 1910-11 ին ուսանող Տարսոնի Գոլէճին մէջ, ապա երկու տարի ձիհանի մէջ և երկու տարի ալ Տէօրթ-Յօյի Էօզէրլի գիւղին մէջ կը պաշտօնավարէ: Ռոտանիօք տարագրուած: Պատերազմէ վերջ մինչև Կիլիկիոյ պարպումը դարձեալ Էօզէրլիի եկեղեցիին մէջ կը գործէ, ապա տարի մը Աղեքսանդրէթի մէջ Բիլիթի պաշտօնեայ: 1922 ին Աթէնքի ՍՔՈՒԼ ԱՎ. Բիլիթիէն կը ղրկուի, որմէ ուսումնաւարտ բլլալէ վերջ Էքիզ-Օլուզ և Քէօրքիւնէ եկեղեցիէն հրաւեր կ'ստանայ, ուր կը գործէ երեք տարիէ ի վեր: 1928 Հոկ. 28 ին հովիւ ձեռնադրուած յիշեալ եկեղեցիին լիմուսին վրայ:

Ե. Ք. ԶԱՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Ի՞նչ է Ե. Ք. Զանից Ընկերութիւնը:—

4. Այս ընկերութիւնը կը քաջաւերէ աւետարանչական դործը և կը սորվեցնէ մարդիկը Քրիստոսի առաջնորդել: Մասնաւոր կարգերու և հաւաքոյթներու մէջ միախօնարական կենսագրութիւնները և զործունէութիւններ կ'ուսումնասիրուին երիտասարդներու մէջ աւետարանչական հոգի ներշնչելու համար:

5. Ընկերութիւնս իր անդամները կը վարժեցնէ եկեղեցիին հաւատարիմ զբոսնելու, անոր ժողովներուն ներկայ ըլլալ և կանոնաւոր նուէրներ տալու: Տասներորդ Լէպէսն անուն խմբակցութիւնը այս ընկերութեան մէկ պատուէն է, որուն անդամակցող թէ ջանասէրները և թէ ուրիշները կը խոստանան իրենց չահերուն մէկ տասներորդը յատկացնել Աստուծոյ թագաւորութեան տարածումին համար:

6. Այս ընկերութիւնը վստահութիւն կը ցուցնէ երիտասարդներուն և անոնց մէջ պատասխանատուութեան և ձեռնարկելու թեան ոգին կը մշակէ, ընկերութեան վարչութիւնը անոնց յանձնելով, ու իրենց ընդունակութիւնները զարգացնելու համար անոնց առիթ տալով: Ընկերութիւնս՝ իր մասնախումբերուն մըջացաւ անդամները կը վարժեցնէ թէ առանձնապէս թէ միասնաբար զործելու: Տր. Տ. Փօլինկ, ընկերութեան ներկայ ընդհանուր նախագահը իր մէկ ուղերձին մէջ կ'ըսէ. 1) «Վստահութիւն ունեցէ՛ք երիտասարդներուն վրայ, 2) Մտիկ ըրէ՛ք ունոնց խօսքերուն, 3) Անոնց ժամանակ տուէ՛ք. 4) Անոնց զործ տուէ՛ք:»

7. Այս կազմակերպութիւնը բոլոր աշխարհի վրայ եղբայրութեան ոգին մշակող ազդակ մը՝ կ'ըլլայ ներկայիս: Տարբեր կրօնքի, ազգի և ցեղի պատկանող իր անդամներուն մէջ կը ջանայ յա-

ռաջ բերել ներդաշնակութիւն, համերաշխութիւն, խաղաղութիւն և բարեմեղոյութիւն:

8. Այս ընկերութիւնը երիտասարդները կը կրթէ ոչ միայն հոգեւոր, այլ նաև մտաւորական, բարոյական և ֆիզիքական մարդերուն մէջ: Ընթերցանութեան համար յարմար պատմութեանքներ—և հոգեւոր զիրքեր կը յանձնարարուին, կատարուած հարցումներուն Տր. Տ. Փօլինկի կողմանէ պատասխաններ կը տրուին: Մրցումներ կը կատարուին անդամներուն զբոսելու և խօսելու կարողութիւնները զարգացնելու համար: Նոյնիսկ Մանկանց բաժնի 8—11 տարեկան անդամներուն մէջ լաւագոյն նախաձեռնողներ, մասնախումբերու և ընկերութեան զործունէութեան մասին լաւագոյն տեղեկացրութիւնը գրողին մըրցանակներ կը տրուին: Ծամբորդութեան բաժնին կողմանէ երբեմն երբեմն դէպ ի ուրիշ վայրեր պատյտ և ճամբորդութիւն ընկելու համար կարգադրութիւններ կը կատարուին:

(Շարունակելի)

(Տիպ.) Ա. ՓՕԼԱՏԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԿԵԱՆՔԸ Ա.ԶԷԶԻ ՄԷՋ

Ազէզ պատեքաղմէն առաջ աննշան պղտիկ գիւղ մըն էր, որ Քիլիսէն դէպ ի Հալէպ երկարող խճուղիին վրայ երթեւեկող կառքերու իբր կայարան կարեւորութիւն ունէր միայն: Ներկայիս բաւական ընդարձակուած գիւղաքաղաք մըն է ան Սիրո-թուրք սահմանէն 15 քիլ. հեռու և 1450 տուն բնակչութեամբ որուն 1100 տունը կը բաղկանայ իսլամներէ, 30 տունը՝ արաբախօս քիլիսցի Յոյն Օրթոտոքսներէ, 7 ընտանիքը՝ հայ կաթողիկէներէ, 15 ընտանիքը՝ հայ Աւետ.ներէ և մնացեալը, մօտաւորապէս 300 տուն, հայ Առաքելականներէ: Աւանին կեդրոնը կը գտնուի բերդը, որ

միայն բարձր հողակոյտ մըն է ներկայիս: Բաղաքը 360 խանութներէ բաղկացեալ գեղեցիկ շուկայ մ'ունի. առեւտրական հրապարակի տէրը զրիթէ Աւրաքներն են. մեծ մասամբ արհեստաւոր դասակարգի կը պատկանին հայերը, որոնք բացարձակ մեծամասնութեամբ Քիլիսի աշխատաւոր և միջին դասակարգին կը պատկանին: Շէնքերը աղիւսաշէն են բայ ի նորաշէն կառավարչատունէն, կառավարական գպրոցէն, երկու իջեւաններէն և զայմագամի ու Բ. գոմիսներութեան պատուիրակի բնակավայրերէն: Շատ քիչ բացառութեամբ զրիթէ լոյր հայերը սեպհական բնակարաններ ունին, առաւելութիւն մը որմէ պարկ են Սուրիաբնակ ուրիշ հայ գաղթականներ: Հայ Առաք. համայնքը ունի եկեղեցի ի մեծ շէնք մը, ուր կանոնաւոր պաշտամունք կը կատարէ Մալաթիացի քահանայ մը: Ունին նաեւ գպրոց մը, ծաղկոցի մը և նախակրթարանի առաջին երկու կարգերէն բաղկացած, ուր կը յաճախեն 140ի չափ մանուկներ: Տիրար Պոյաճեան, Ամերիկարնակ Քիլիսցի հայ Աւետ. հարուստ մը, նիւթապէս օժանդակած է այս շէնքերու շինութեան:

Հայ Աւետ. համայնքը, մօտ 15 տուն որուն 10 տունը Քիլիսի նախկին հայ Աւետ. եկեղեցին կը պատկանին, վարձուած տան մը մէջ կը կատարէ իր կանոնաւոր ժողովները: Կիրակի առաւել պաշտամունքին ներկայ կը գտնուին մօտ 100 հոգի: Ունին նաեւ մանուկներու կիրականօրեայ վարժարան մը մօտ 50 աշակերտներով: Կրօնական պաշտօնները կը կատարուին անուս բայց եռանդուն աշխարհականներէ, որոնց անյուստալի յաջողութիւնը կարգ մը հայ Առաք.ներուն նախանձը շարժած ըլլալ կը թուի. հետեւաբար ցաւալի է որ երկու համայնքներու յարաբերութիւնը բաղձալի վիճակ մը չի ներկայացներ: Ունէ մէկ կերպով այս վիճակին պէտք է վերջ մը տալ, խնդիրը աւելի բարդ հանգամանք մը չտայցած:

ՊԻԹԻԱՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Պիթիասի հայ Աւետ. ժողովուրդը, մօտ 300 հոգի, տարիէ մը ի վեր գրկուած է պաշտօնական հովիւէ մը: Տիրար Միհ-

րան Քէօրօղլուեան, որ Հալէպի Գուլճին սօփօթ կարգը աւարտած է եւ իրր ուսուցիչ պաշտօնավարելով հանդերձ կրօնական պաշտամունք ալ կատարած է, զոն ձգելով տեղացի ժողովուրդը: Դըպրոցը, ուր կը բաղկանայ ծաղկոցի երկու և նախակրթարանի հինգ կարգերէն, ունի 60 աշակերտներ և երկու ուսուցիչներ: Ժողովուրդը, որուն հասոյթի էն կարեւոր ազդեւորը շերամն է, աղքատ է և սակաւթիւ անհատները միայն ինքնարաւ են: Ս. Բ. Ջանից Միութեան աղջիկներու բաժինը իր 40 անդամուհիներով և մանչերու բաժինը իր 30 անդամներով, հակառակ պատրաստուած զեկավարի մը չգոյութեան, կը պահեն իրենց կորովն ու եռանդը և արդիւնաւոր գործունէութիւն կը ցուցնեն օգտակար ըլլալով եկեղեցիին:

ՀԱՅ ԿԵԱՆԲԸ ՊԱՍԼՊԷՐԻ ՄԷՋ

Պաալպէքի մէջ փոքրութիւ հայութիւն մը կայ, բաղկացած տասը ընտանիքներէ և 18 զինուորներէ Լիբանանեան բանակին մէջ: Բոյորն ալ արհեստաւորներ են, զոն և ֆիզիքապէս առողջ, շնորհիւ տեղին առողջ կլիմային: Այս պատիկ գաղութը թէպէտ գօրկ է իր սեպհական եկեղեցիի շէնքէն եւ հովիւէն բայց ունին 12 աշակերտներով գպրոց մը վարժուհիի մը խնամքին տակ: Երեքշաբթի իրիկուն Վիլյա Գառմ Զօթէլի մէջ քաղաքէն եկած 11 հայեր, երկուքը զինուոր եւ համաժողովին հայ անդամները, թուով 15 հոգի, միատեղ եկան եւ կազմեցին մտերմական տաքուկ շրջանակ մը: Արտաւարդ Վրդ. Յ. Շնորհօքեան եւ Պր. Զէնեան խօսելէ վերջ Բարզէն Արքայան գեղեցիկ յորդորական մը բրաւ, եւ յայտնեց թէ պէտք է հայերը սիրեն գիրար, յարգեն գիրար, գործակցին իրարու հետ եւ մանաւանդ ուղղամիտ եւ մտաւհիլ ըլլան իրենց առեւտրական եւ բնակարան յարաբերութիւններուն մէջ, որպէսզի բաղձայի եւ հաճելի տարր մը միանաւոր իտեղ: Բոյոր ներկաները մտերմական խօսակցութիւնէ մը վերջ գուարթ եւ զոն բաժնուեցան:

ԽՈՒՄԻ ՄԸ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Ապրիլ 13 ին քաղաքս ժամանեցին զից հոգիէ բաղկացեալ այցելուներու խումբ մը՝ իրրեւ Համաշխարհային Կիրականօրեայ Դպրոցը ներկայացուցիչներ, նախապէս այցելած ըլլալով Յունաստան և Եգիպտոս։ Անոնց նպատակն է միութիւն և յարաբերութիւն մը հաստատել Արևելքի եւ Արևմուտքի եկեղեցիներու և Կրօնի։ Դպրոցներու միջև։

Անոնցմէ մին, Տիար Լեւոն Զէնեան, բնիկ Այնթապցի, պիտի մնայ Սուրիոյ մէջ և պիտի կազմակերպէ Կիրականօրեայ Դպրոցներ հայ Լուս. եկեղեցւոյն մէջ։

Տեղւոյս միսիօնարներէն Վեր. Փարթրիճ Եգիպտոսէն մինչև Սուրիա ընկերակցելով օգնած է անոնց՝ այլ եւ այլ տեղեր զանոնք առաջնորդելով։

Անոնցմէ ամէն մէկը զատ զատ և հաւաքաբար առիթը ունեցան այլ եւ այլ տեղեր քարոշներ, խրատականներ եւ թելադրիչ ուղերձներ խօսելու։ Կիրակի առաւօտ (Ապրիլ 14) Տր. Բաֆըթի՝ Բէտլէմ, Գալիֆորնիոյ կրօնական կրթութեան փրօֆէսօրը՝ Հայ Լուս. եկեղեցին, Տր. Մէյն Ագիգիյէի Հայ Աւետ. եկեղեցին, և Մր. Հասուլէթ Նոյն պահուն վրանաքաղաքի Աւետ. եկեղեցին խօսեցան։

Կէսօրէ առաջ անոնք խօսեցան Ագիգիյէ եկեղեցւոյ մէջ հինգ տարրեր Կրթ. Դպրոցներէն 1000 էն աւելի մանչերու և աղջիկներու։

Միջօրեաքին Տր. Հօփքինգ, համաշխարհային Կրօնի. Դպրոցի քարտուղարը՝ Սուրիոյ Աւետ. եկեղեցւոյ մէջ եւ Մր. Վօրիս, Մ. Ա. Նպատաստատոյցի քարտուղարը, Ագիգիյէի Հայ Աւետ. եւ եկեղեցւոյ մէջ քարոզեցին։

Իսկ երեկոյեան, այս հիւրերէն մի քանին խօսեցան Մ. Ա. Որբերու Լիկային մէջ, և Տր. Բաֆըթին Ագիգիյէ եկեղեցւոյ մէջ Անգլիկներէն լեւուով՝ նիւթ ունեւնալով «Կրօնական կրթութեան նշանակէտը» յոյժ ուղղու և տպատրիչ եղանա-

կով մը շինիչ և օգտակար քարոզ մը տըւաւ, որուն կեդրոնական զազափօրն էր — բարի ըլլալ բանի մը մէջ, որ կ'արժէ, ուրիշներուն համար, Յիսուս Քրիստոսը ըլլալով միշտ Կեանքին կեդրոնը։

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

«ՄԻՆՁԵՒ ՄԱՀ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՂԻՐ»

Այս պատուէրը Աստուածաշունչի պատուէրներէն մին է։ Սակայն իմ փոքր ընթերցողներէս ոմանք թերեւ հարցնեն թէ՝ արդեօք կարելի՞ բան է մինչև մահ հաւատարիմ ըլլալ. և ոմանց համար, թերեւ շատերուն համար, աւսիկա բողաբձակապէս անկարելի է։ «Ես դպրոցիս կանոնները հաւատարմաբար պահելու համար ոչ թէ կեանքս զոհել, այլ հինգ վայրկեանի հաճոյքս իսկ զոհել չեմ ուզեր, և եթէ ուզեմ իսկ, չեմ կրնար։» Արդեօք այս կերպ խորհողներ լո՞ւշապէս կը հասկնան նկարագրի, կամքի ոյժ, զոհողութիւն, կատարելութիւն, քրիստոնէական փորձառութիւն, դժուարութիւններու յաղթել, և այլն։ Հարկ չէ Ստեփաննոսի, Պօղոսի կամ Յիսուսի կեանքը իբր օրինակ մեր փոքր ընթերցողներուն առջև դնել, նոյն իսկ կռապաշտ ազգերու հին պատմութիւններ լի են այնպիսի իրական դէպքերով՝ որոնց մէջ տկար կարծուող կիներ իրենց նուիրական նկատած բաներու սիրոյն համար մահը յանձն առած են։ Հոռմայեցոյ պատմութեան մէջ այսպիսի շատ օրինակներ կան. օրինակի համար, Արիա՝ կինն էր Քասինա Փէթոսի, որը ինքզինք սպաննելու էր Կողմտիոսի տըւած վճիռին համեմատ։ Ինքզինք սպաննել, կը կարծէ՞ք թէ զիւրին է։ Մարդը ան ու զոգի մէջ կը տալու բերել, երբ իր ազնիւ կինը, մահուան մէջ իսկ իր ամուսինէն չզատուելու յանգուզն որոշմամբ, խից սուրբ անոր ձեռքէն, զայն իր կուրծքը խօջեց, և իր մնացեալ

ոյժովը զայն իր ամուսնոյն երկարեց՝
ըսելով. «Ձի ցաւցնէր, ո՞վ իմ փէթաս:»
Հեթանոսները մինչեւ մահ հաւատարիմ
ըլլալը այսպէս կը հասկնային: Եւ ոչ
միայն հեթանոս կիներու՝ այլ քրիստո-
նէից մէջ ալ պակաս չեն նմանօրինակ
սրտաճմրէկ դէպքեր: Հետեւեալը ասոր
մի գեղեցիկ նմոյշն է. —

Կալէրիոս Մաքսիմիանոս կայսրին
յրով՝ Նիկիոմիդիոյ մէջ Ադրիան անունով
պաշտօնեայ մը կար. ասիկա Նադալիա
անունով մանկամարդ գեղանի կին մ'ու-
նէր, հագլի քսանութ տարեկան: Նա-
դալիա քրիստոնեայ էր, մինչդեռ Ադ-
րիան քրիստոնեայ չըլլալէ զատ՝ քրիս-
տոնեաները չարչարելու ու մեռցնելու
պաշտօնն ունէր: Եւ սակայն իր մար-
տիրոսած քրիստոնեաներուն մահուն
տեսարանը երբեք եւ իր կնոջ ազնիւ ա-
ռաքինութեանց ազդեցութեան տակ իւր
անհաւատութիւնը տեղի տուաւ, եւ
պաշտօնապէս յայտարարեց թէ ինքն եւս
քրիստոնեայ է. Ասոր վրայ զինքը բան-
տարկեցին, եւ մեռնելու կարգը իրեն ե-
կաւ: Սպաննութեան օրէն մի քանի օր
առաջ իր կինը տեսնելու համար հրաման
ուզեց, հրամանը տրուեցաւ, ու բան-
տէն ելաւ: Երբ իր կինը իմացաւ ա-
մուսնոյն բանտէն ելած ըլլալը, կարծե-
լով թէ քրիստոնէութիւնը ուրաջած է,
քորձ հագաւ, եւ սուգ բռնեց ու ըսաւ.
«Այսուհետեւ զիս ցուցնելով մարդիկ պի-
տի ըսեն. ահա մեռնելէն վախնալուն
համար քրիստոնէութիւնը ուրաջողին
կինը:» ...Տան զուռը կը զարնուէր.
«Ո՞վ ազնիւ եւ քաջարի կին», լսուեցաւ
Ադրիանի ձայնը, «Փառք կուտամ Աս-
տուծոյ որ ես քեզի տնարժան չեմ, բայց
զուռը, որ մեռնելէս առաջ վերջին մնաս
բարովս ըսեմ քեզի:»

Բայց վերջին մնաս բարովը չեղաւ ա-
սիկա, թէև արտօմ, տխուր իրարմէ
բաժնուեցան այդ օրը: Հետեւեալ օրը
թշուառ Ադրիանը խորազանով ծեծե-

ցին, չարչարեցին ու նորէն զնտանը նե-
տեցին: Նադալիա, այդ ազնիւ կինը,
եղաւ, մագերը կտրեց, եւ զինուարականի
մը հազուստով ծպտուած բանտը զնայ,
հոն գտաւ իր ամուսնինը կիսամեռ վի-
ճակի մէջ: «Ո՞հ, աչքիս լոյսը», ըսաւ.
«Երանելի՛ ես, որովհետեւ Քրիստոսի սի-
րոյն համար կը չարչարուիս:» Հետեւ-
եալ օրը իր գլխատութեան օրն էր:
Ձինք գլխատելէ առաջ՝ անլուր տան-
ջանքներով իր ձեռքերն ու ոտքերը մէկիկ
մէկիկ կտրտեցին, գլուխը երկաթի տակ
սեղմեցին, կռնակին միսերը կտրտեցին:
Սակայն աս ամենուն մէջ իր կինը իր
քով միշտ կը խրախուսէր զինքը «Մին-
չեւ մահ հաւատարիմ մնալու:» Եւ ան
միջեւ մահ հաւատարիմ մնաց:

Իր մահէն վերջ Նադալիա վաճառ մը
քաշուելով, իր կեանքին մնացեալ մասը
հոն անցուց, ազօթ քով ու բարեկործու-
թիւններով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կրօնք եւ Մարդկայն Փորձառութիւն

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Տեղեւանիւն Աղօթք ՎԵՐ. Ե. ԲԱՍՈՒՆԻ
ՅՈԴՈՒԱԾՆԵՐ

Ձոյգ Զախմիշտ Բարոյականը

ՓՐՕՖ. Զ. Ա. ՊԵՋՃԵԱՆ

Աստուծային Երջնչում

ՎԵՐ. Ս. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

Պատշափի Հաւատադրութիւն մեջ Տ. Ճ. Խ.

Դիւանարութեան Ոյժ

ՏՈՔԹ. Ֆ. ՅՈՒՆԱՆԵԱՆ

Քիօրթիմե Հայ Աւես. Եկեղեցի

ՎԵՐ. Ա. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ե. Բ. Զանից Բնկերութիւնը եւ Մեք

Եկեղեցիները ՏԻԿ. Ա. ՓՈԼԱՏԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE